Ստեփանավանի N1 վարժարան

# Ուսումնական հաստատության
# XI հումանիտար դասարանի դասղեկի
# Աշխատանքային տարեկան պլան
# 2020-2021ուստարի

Դասղեկ՝ Ա. Ալիխանյան

# Դասղեկի աշխատանքային տարեկան պլան

## 2020-2021ուստարի

Դպրոց - Ստեփանավանի N1 վարժարան

Դասարան -11-րդ հումանիտար

Դասղեկ- Ա. Ալիխանյան

Հաշվի առնելով և ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ նախընտրում եմ „Դասղեկի ժամ „ դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր

Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների, տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից, „Մտքի հրավառություն „ գրքից և այլ բարոյախրատական ստեղծագործություններից: Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը և նկատված թերացումները վերացնել ու բացառել: Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք: Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում:

| Դասի համարը | Դասի թեման |
|---|---|
| 1 | Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում: |
| 2 | Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները: |
| 3 | Անկախության անգնահատելի դերն ինձ համար: |
| 4 | Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ |
| 5 | Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ: |
| 6 | Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում |
| 7 | Նյութապաշտություն և չարիք: Անշահախնդիր նվիրում: |
| 8 | Ճակատագի՞ր, թե՞ սեփական բախտի տնօրինում: |

| | |
|---|---|
| 9 | Հոգու կրթություն: |
| 10 | Հոգու կրթություն և մտքի թռիչք: |
| 11 | Ոսկե աշնան գույներն իմ խոհերում: |
| 12 | Աշնանային էքսկուրսիա : Դիտել ներկայացում Պարոնյանի անվան թատրոնում: |
| 13 | Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն: |
| 14 | Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները: |
| 15 | Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում: |
| 16 | Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում |
| 17 | Հայրենի՛ք,ես զարկն եմ քո բազկի: |
| 18 | Հայոց բանակ |
| 19 | Մարմնակրթություն, առողջապահություն: |
| 20 | Հիգիենիկ հարցեր: |
| 21 | Մարդկային արատներ: |
| 22 | Մարդկային արատներ: |
| 23 | Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը: |
| 24 | Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով: |
| 25 | Սերը որպես տիեզերական զգացմունք: |
| 26 | Հանճարները սիրո մասին: |
| 27 | Սերը ոգեշնչման աղբյուր: |
| 28 | Խրատանի, առածանի, մեկնաբանություններ: |
| 29 | Ինքնատիրապետման մի քանի հարցեր: |
| 30 | Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ |
| 31 | Հաղթանակների ամիս մայիս: |
| 32 | Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ) |
| 33 | Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը: |
| 34 | Ամփոփիչ դաս: |

Նախատեսում եմ նաև ,,Բաց դաս/եր՛…որի/որոնց/թեմայի ընտրությունը կկատարեն երեխաները՝ ընտրելով իրենց ավելի հոգեհարազատ թեման: